

Սամարացին և ամոբես կողոպտուածն ու լքուածը: Կեանքի ծանապարհին վրայ ունէ ինկած վիրատոր մը վերադարձնես տուն:

Թիսուս, ամէն օր, կը տեսնէ իր բովէն անօթի ու ծարաւ անցորդները: Ան կը տեսնէ նաեւ բեզ ու զիս, ու կը նայի սիրոյ քաղցր հրաւերով մը, ու երկարելով կեանքի անհատնում բաժակը, կ'ըսէ բեզի:

«Եթէ գիտնայի՛ր Աստուծոյ պարգեւը»—Յով. Դ.11:

Կ'ուզե՞ս վստահիլ և ընկերանալ այս Գալիլեացին որպէս աշակերտ: Կուզե՞ս ստանալ կեանքդ առաջնորդող աստղ մը: Կուզե՞ս որ կեանքդ ըլլայ ծախրանք մը, տեսի՛լ մը և երաժշտութիւն:

Նայէ՛ Թիսուսի Դէմքին և ստացի՛ր հպո՛ւմն Անոր նայուածքին: Թող բու կեանքդ ներշնչուի անհուն բերկութեամբ Թիսուսի երկնածածանչ նայուածքն:

ԱԼՓԵՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ՑԱԽԻՆ ԻՄԱՍՏԸ

Ցաճախ հիւանդութիւնները եւ վիշտերը կ'օգնեն, որ տառապողը աւելի մօտենայ Աստուծոյ եւ ապաւինի Անոր հայրախնամ գթութեան:

Մեծ իմացականութիւնները, որոնք սնած են հաւատքով՝ կը խոստովանին երախտագիտութեամբ այս շնորհը ու երգեց Դրախտ Կորուսեալին մէջ իր հոգեկան մեծ յուզումները:

Միլթը՝ իր կուրութեան պատճառաւ յստակօրէն տեսաւ հաւատքի խորութիւններուն մէջ Աստուածային այս շնորհը ու երգեց Դրախտ Կորուսեալին մէջ իր հոգեկան մեծ յուզումները:

Մեծն փասքալ՝ մտաւ քրիստոնէութեան մէջ իր հիւանդութեան պատճառով եւ իր հնարած գիտերով դարձաւ մարդկութեան մեծ բարերարներէն մէկը:

Պերովէն լսողութիւնը բոլորովին կորսնցնելէ ետք, իր երաժշտութիւնը ընդգրկեց աստուածային տարածութիւնները:

Ցորը՝ ծանրակշիռ կորուստներէ եւ չարչարալից կեանքէ մը ետք, արժանացաւ առաքինութեան երկնապարգեւ դափնեպսակին:

ՎԱՐԴԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԻՒԼԿԵՐԵԱՆ